ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 27

«18» 02 2024թ. ք. Երևան

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱԶԴԱՐԱՐԻՆ ՏՐՎՈՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ

Հիմք ընդունելով «Ազդարարման համակարգի մասին» ՀՕ-97-Ն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին» N 272-Ն որոշման պահանջները, ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով

Հրամայում եմ՝

1. Սահմանել՝

1) Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների, հաշվառման, ձևակերպման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի (կցվում է):

2) Ներքին և արտաքին ազդարարման դեպքում ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը Հայաստանի Հանրապետության դատախազության պաշտոնական կայքէջում:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին ու դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ գլխավոր դատախազի
2021թ. փետրվարի «18»
N 27 հրամանի

Կ Ա Ր Գ

ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների, հաշվառման, ձևակերպման

1.Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձանց կողմից հաղորդումն անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվառվում է գրանցամատյանում (Ձև 1)՝ համապատասխան գրառման կատարմամբ:

2. Գրանցամատյանում արձանագրվում են հետևյալ տեղեկությունները՝

1) հաղորդման հաշվառման հերթական համարը.

2) հաղորդման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը.

3) հաղորդումը ներկայացրած անձի անունը, ազգանունը և հայրանունը.

4) հաղորդմամբ ներկայացված տեղեկության համառոտ բովանդակությունը.

5) հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների ամբողջական նկարագիրը.

6) հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների արդյունքը.

7) նշումներ ազդարարին ծանուցելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ.

8) ազդարարի ստորագրությունը.

9) գրանցամատյանը վարողի ստորագրությունը.

10) հաղորդման առնչությամբ այլ տեղեկություններ:

3. Գրանցամատյանը վարվում է փաստաթղթային տարբերակով՝ բացառությամբ ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրված հաղորդումների: Պատասխանատու անձը համարակալում, ստորագրում և կնքում է գրանցամատյանի բոլոր էջերը:

4. Հաղորդման հաշվառման նպատակով կազմվում և վարվում է գործ, որում պետք է պահվեն նաև գրանցամատյանում արձանագրված տեղեկություններին վերաբերող համապատասխան բոլոր նյութերի պատճենները:

Ձև

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ԱԶԴԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ

Հաղորդման հաշվառման հերթական համարը	Հաղորդման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը	Հաղորդումը ներկայացրած անձի անունը, ազգանունը և հայրանունը	Հաղորդմամբ ներկայացված տեղեկության համառոտ բովանդակությունը	Հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների ամբողջական նկարագիրը	Հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների արդյունքը	Նշումներ ազդարարին ծանուցելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ	Ազդարարի ստորագրությունը	Գրանցամատյանը վարողի ստորագրությունը	Հաղորդման առնչությամբ այլ տեղեկություններ
1	2	3	4	5	6	7	8	9	10

Հավելված N 2

ՀՀ գլխավոր դատախազի
2021թ. փետրվարի «18»
N 27 հրամանի

ԿԱՐԳ

ներքին և արտաքին ազդարարման դեպքում ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման

1. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում ազդարարի անձնական տվյալները չբացահայտելու նպատակով փաստաթղթաշրջանառությունը կատարվում է Գլխավոր դատախազի կողմից նշանակված համապատասխան պատասխանատու անձանց միջոցով:

2. Վարույթ հարուցելու դեպքում վարույթ հարուցելու մասին ակտի և վարույթի հետ կապված այլ փաստաթղթերի մեջ չեն նշվում ազդարարման փաստը և ազդարարի անձնական տվյալները:

3. Ազդարարին վնասակար գործողություններից կամ դրանց հետևանքներից պաշտպանելու նպատակով համապատասխան Լիազորած անձը իր իրավասության շրջանակում, Գլխավոր դատախազի հետ համաձայնեցնելով՝

1) ապահովվում է տեղեկությունների գաղտնիությունը.

2) ստեղծվում է ազդարարի կողմից իր ծառայողական պարտականությունների անարգել իրականացման համար բավարար պայմաններ.

3) ապահովվում է ազդարարին արհեստականորեն հանձնարարականներով չծանրաբեռնելը՝ հանձնարարականների նկատմամբ հսկողություն սահմանելու միջոցով.

4) ազդարարի գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտությունների դեպքում ձեռնարկվում է դրանց վերացման ուղղությամբ համապատասխան միջոցներ.

5) անհրաժեշտության դեպքում՝ ազդարարին հնարավորության դեպքում տեղափոխում է այլ աշխատասենյակ.

6) ձեռնարկում է համապատասխան միջոցներ ազդարարի աշխատանքային իրավունքների վերականգնման ուղղությամբ, այդ թվում՝ ազդարարին վերականգնում է աշխատանքի, հատուցում նրա կրած վնասները.

7) ձեռնարկում է իրավիճակից բխող՝ ազդարարի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ այլ միջոցներ: